INECOBANK

11.06.2026 № C6796

**ԵՐԱՇԽԻՔ N EA26/00642**

1. Սույն երաշխիքը, ինչպես նաև սույն երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում են ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/100 ծածկագրով (Չափաբաժին 1, 11, 18, 20, 29, 31, 42, 46, 49) կազմակերպված գնման ընթացակարգին ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ԳՅՈՂԱԿՅԱՆՆԵՐ ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված գրավոր պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 16,978,708.00 (տասնվեց միլիոն ինը հարյուր յոթանասունութ հազար յոթ հարյուր ութ) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900008000466 /հայտի ապահովում/ հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում Բանկի կողմից Երաշխիքի ելքագրման ամսաթվից, որը նշված է սույն Երաշխիքում և գործում է բենեֆիցիարի կողմից ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/100 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակագին մասնակցելու նպատակով պրինցիպալի կողմից հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված 120 (մեկ հարյուր քսան) աշխատանքային օր բայց ոչ ավել, քան 07/12/2026թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի liana.kharatyan@escs.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 հասցեով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ**
**ԳՅՈՒՄՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ**
**ՓՄՁ ԲԻԶՆԵՍԻ ԲԱԺՆԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԷՄԻԼ ԹՈՐՈՍՅԱՆ**

Կատարող՝ Միլենա Աբրահամյան
Հեռ.՝ +374 10 510510 (5943)

ԻՆԵԿՈԲԱՆԿ

25 NOV 2025 № 353

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է

ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ Գյումրիի մասնաճյուղի

Կառավարիչ ______ Մկրտիչ Ասլանյան

# ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

քաղաք Երևան                    քսանհինգը նոյեմբերի երկու հազար քսանհինգ թվականի

**«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ** (այսուհետ նաև՝ **Բանկ**), ի դեմս Բանկի **Գործադիր տնօրեն Հայկ Ոսկանյանի,** ով գործում է Բանկի կանոնադրության հիման վրա, լիազորում է Բանկի **«Գյումրի» մասնաճյուղի ՓՄՁ բիզնեսի բաժնի ղեկավար Էմիլ Թորոսյանին** (նույնականացման քարտ՝ 012403655, տրված՝ 24/02/2020թ-ին 030-ի կողմից).

1. հանդես գալ Բանկի անունից և ստորագրել Բանկի «Գյումրի» մասնաճյուղի ՓՄՁ բիզնեսի բաժնի ղեկավարի աշխատատեղի նկարագրով սահմանված գործառույթների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր, այդ թվում նաև.
   1.1. վարկային փաթեթների մեջ ներառված փաստաթղթեր, այդ թվում՝ վարկերի, երաշխիքների և ակրեդիտիվների տրամադրման գլխավոր պայմանագրեր, վարկային, գրավի (հաջորդող գրավի, հիփոթեքի, առուվաճառքի և գրավի/հաջորդող գրավի, անշարժ գույքի առուվաճառքի և հիփոթեքի/հաջորդող հիփոթեքի), երաշխավորության, պարտքի տարաժամկետ մարման, դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի), բանկային երաշխիքի տրամադրման, ակրեդիտիվի բացման պայմանագրեր և այդ պայմանագրերի լրացուցիչ, ինչպես նաև լուծման համաձայնագրեր (ներառյալ՝ բանկային երաշխիքի տրամադրման, ակրեդիտիվի բացման հայտեր, դրանցում փոփոխություններ, լրացումներ կատարելու և լուծելու վերաբերյալ փաստաթղթեր), ակրեդիտիվի բացման և սպասարկման հետ կապված այլ փաստաթղթեր, բանկային երաշխիքներ, դրանցում փոփոխություններ, լրացումներ կատարելու վերաբերյալ գրություններ,
   1.2. գրավի/հաջորդող գրավի իրավունքի դադարեցման (գրավադրված գույքի ազատման) գրություններ,
   1.3. հաջորդող գրավի համաձայնություններ,
   1.4. գրավադրված գույքի օտարման, այդ թվում նաև՝ իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում ներդրման համաձայնություններ,
   1.5. գրավադրված գույքի վարձակալության, ենթավարձակալության հանձնման համաձայնություններ,
   1.6. գրավադրված գույքի, այդ թվում նաև՝ անշարժ գույքի և տրանսպորտային միջոցի նկատմամբ փոփոխությունների կատարման և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ կատարվող փոփոխությունների պետական գրանցման համաձայնություններ,
   1.7. գրավադրված անշարժ գույքի գտնվելու հասցեում քաղաքացիների հաշվառման համաձայնություններ,
   1.8. գրավադրված տրանսպորտային միջոցով ՀՀ տարածքից ժամանակավորապես բացակայելու համաձայնություններ,

1.9. լիզինգային գործառնությունների և գործարքների իրականացման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, այդ թվում նաև՝

1.9.1. լիզինգի (և դրա հետ կապված) պայմանագրեր, համաձայնագրեր, այդպիսի պայմանագրերի և համաձայնագրերի, ինչպես նաև դրանց լուծման, փոփոխությունների, լրացումների կատարման վերաբերյալ համաձայնագրեր,

1.9.2. առուվաճառքի/մատակարարման պայմանագրեր և համաձայնագրեր, այդպիսի պայմանագրերի և համաձայնագրերի, ինչպես նաև դրանց լուծման, փոփոխությունների, լրացումների կատարման վերաբերյալ համաձայնագրեր,

1.9.3. հանձնման-ընդունման ակտեր,

1.9.4. մաքսային փաստաթղթեր,

1.9.5. բեռնափոխադրման փաստաթղթեր,

1.9.6. ՀՀ Ներքին գործերի նախարարության հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչության հաշվառման-քննական բաժանմունքներ ներկայացվող փաստաթղթեր,

1.9.7. լիզինգի առարկա հանդիսացող տրանսպորտային միջոցով ՀՀ տարածքից ժամանակավորապես բացակայելու համաձայնություններ,

2. հանդես գալ Բանկի անունից ՀՀ Պետական եկամուտների կոմիտեում, ներառյալ՝ մաքսային մարմիններում,

3. հանդես գալ Բանկի անունից ՀՀ Ներքին գործերի Նախարարության հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչության հաշվառման-քննական բաժանմունքներում և իրականացնել տրանսպորտային միջոցի, շինարարական տեխնիկայի, գյուղտեխնիկայի և լիզինգի պայմանագրով սահմանված լիզինգի առարկա հանդիսացող այլ գույքի նկատմամբ Բանկի սեփականության և/կամ լիզինգի իրավունքի գրանցման, տրանսպորտային միջոցի գրավի (ներառյալ՝ հաջորդող գրավի, առուվաճառքի և գրավի/հաջորդող գրավի) պայմանագրերից ծագող Բանկի գրավի իրավունքի գրանցման հետ կապված բոլոր անհրաժեշտ գործողությունները, այդ թվում՝ ներկայացնել դիմումներ, ստանալ գրավի իրավունքի, լիզինգի և սեփականության իրավունքի գրանցման վկայականներ, ստորագրել սույն լիազորության հետ կապված ցանկացած փաստաթուղթ,

4. հանդես գալ Բանկի անունից պետական այլ իրավասու մարմիններում և իրականացնելու լիզինգի պայմանագրով սահմանված լիզինգի առարկա հանդիսացող այլ գույքի նկատմամբ Բանկի սեփականության և/կամ լիզինգի իրավունքի գրանցման հետ կապված բոլոր անհրաժեշտ գործողությունները,

5. հանդես գալ Բանկի անունից և ստորագրել վարկային փաթեթների մեջ ներառված փաստաթղթեր, այդ թվում՝ վարկային, գրավի (հաջորդող գրավի, հիփոթեքի, առուվաճառքի և գրավի/հաջորդող գրավի, անշարժ գույքի առուվաճառքի և հիփոթեքի/հաջորդող հիփոթեքի), երաշխավորության, պարտքի տարաժամկետ մարման, դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրեր և այդ պայմանագրերի լրացուցիչ, լուծման համաձայնագրեր, ինչպես նաև ստորագրել սույն լիազորագրի 1.1 կետից մինչև 1.9.7 ենթակետերով ներառյալ նախատեսված փաստաթղթեր,

6. իրականացնել վերոնշյալ գործողությունների իրականացման համար անհրաժեշտ այլ գործողություններ:

Սույն լիազորագրի **1.1 կետից մինչև 1.9 կետի 1.9.1 և 1.9.2 ենթակետերով ներառյալ և 5-րդ կետով** նախատեսված լիազորությունները տրված են առանց վերալիազորման իրավունքի: Սույն լիազորագրի 1.9 կետի մնացած ենթակետերով և սույն լիազորագրի 2, 3, 4 և 6 կետերով նախատեսված լիազորությունները տրված են վերալիազորման իրավունքով:

Սույն լիազորագիրն ուժի մեջ է տրման պահից և գործում է **3 (երեք) տարի** ժամկետով: Սույն լիազորագրի տրման պահից ուժը կորցրած ճանաչել Էմիլ Թորոսյանին 2024 թվականի նոյեմբերի 26-ին տրված թիվ 346 լիազորագիրը:

**ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ** **ՀԱՅԿ ՈՍԿԱՆՅԱՆ**


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA ID CARD
ԹՈՐՈՍՅԱՆ
TOROSYAN
ԷՄԻԼ
EMIL
Ա/M
<<ARM
24.02.2030


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ARMENIA
24.02.2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ARMENIA

030
2808830114
ՀՅԲ
ARMENIAN

I<ARM0124036558<<<<<<<<<<<<<<<
8308182M3002245ARM<<<<<<<<<<<4
TOROSYAN<<EMIL<<<<<<<<<<<<<<<<